ԼՈՒՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Լաւագոյն Դասեր՝ Ներկայի Համար

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ, «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՅԴ-ԲՈԼՇԵՒԻԿ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ (1917-1921)», ԵՐԵՒԱՆ, 1997Թ.:

ԳԷՈՐԳ ԽՈՒԴԻՆԵԱՆ
Պատմագիտութեան Թեկնածու

Պատմութիւնը քաղաքականութեան ուսուցիչներից ամենահմաստունն է: Այդ պատճառով քաղաքական գործիչները յատուկ ուշադրութեամբ ու ակնածանքով են վերաբերւում պատմութեան մչուշապատ էջերում խտացած իմաստութեանը, բանականութեան տեսանկիւնից յաճախ մեկնաբանութեան չենթարկուող իռացիոնալ ու պարադոքսային երեւոյթներին: Սակայն լինում են նաեւ պատեհապաշտներ, որոնք փորձում են պատմութիւնը դարձնել իրենց չափահասնդրութիւնների բաւարարման գործիքն ու սպասաւորը, մոդեռնիստական-գերարդիական սխեմաների օգնութեամբ ամէն ինչ տրոհելով «լաւ» ու «վատ» իրադարձութիւնների համակարգի մէջ: Այս ծայրայեղութիւնն է, դժբախտաբար, տիրապետում մեր նորանկախ Հանրապետութեան քաղաքական վերնախաւում, որն այսօր թոյլ չի տալիս ազգովին գիտակցել մեր պատմութեան կրկնուող եւ անկրկնելի երեւոյթների յարաբերակցութիւնը, առանձնացնել մեր յիշողութեան այն թանձրացած չերտը, որը ներկայ հանգրուանում չի կորցրել արդիական նշանակութիւնն ու արժէքը, այլ ձեռք է բերել աւելի հրատապ ու այժմէական հնչեղութիւն:

Հայաստանի անկախացումով վերականգնուել են մեր առաջին Հանրապետութեան արտաքին խորհրդանիշները, նաեւ՝ նրա արտաքին ու ներքին քաղաքական կացութեան բաղկացուցիչ տարրերը. թշնամական չրջապատ, աշխարհաքաղաքական մրցակցութիւն, տնտեսութեան խոր ճգնաժամ եւ այլն: Սակայն անցած 70 տարիների ընթացքում փոխուել են ոչ միայն ազգերի մրցակցութեան ու գոյապայքարի արժէչափերը, այլեւ՝ մենք ինքներս: Ներկայ Հայաստանի Հանրապետութիւնը միջազգայնօրէն ճանաչուած, միաւորը, Հարեւանի հետ պատերազմում յաղթական երկիր է: Այս բոլոր գործօնների յարաբերակցութեան հաշուառումը ներկայ սերնդին իրաւունք չի տալիս առաջին Հանրապետութեանը բաժին հասած աներեւակայելի դժուարութիւններն ու անյաղթահարելի խոչընդոտները (եղեռն, պատերազմ՝ մի քանի ճակատներում, թուրք-բոլշեւիկեան դաշինք եւ այլն) համեմատել ներկայումս իրենց լուծումը պահանջող հիմնահարցերի մեծութեան հետ:

Առաջին Հանրապետութեան ողբերգական պատմութեան դասերը, որոնց ուսումնասիրութեան դժուարին գործի մէջ իր գիտական լուրջ ներդրումն է այսօր ներկայացնում ամերիկահայ չնորհալի պատմաբան Ռուբինա Փիրումեանը, հնարաւոր չէ ըմբռնել, իրացրնել ու հաշուի առնել նման պարզունակ դուգահեռների հարթութեան վրայ: Այդ դասերն աւելի խոր են ու ամբողջական, ուստի ներկայացուող մենագրութիւնը կարելի է համարել դրանց համակարգուած ուսումնասիրութեան սկիզբը միայն: Սկիզբն այն առումով, որ Ռուբինա Փիրումեանի մենագրութիւնը, պրոֆ. Ռիչարդ Յովհաննիսեանի արժէքաւոր աշխատութիւնից յետոյ, փաստօրէն, առաջին գործն է, ուր 1917-1921 թուականների իրադարձութիւնները մանրամասնելու կամ դրանց առանձին հատուածների ուսումնասիրութեան մէջ կենտրոնանալու փոխարէն՝ փորձ է արւում մատուցել պատմութեան ամփոփ, բայց միաժամանակ դինամիկ ընթացքի հիմնական, առանցքային պահերը. այնպէս, ինչպէս ամբողջական պատկերն իր աչքերի առջեւ պատկերացնող նկարիչը կտաւին է յանձնում ոգեչրնչման առարկայի առաջին, համարձակ, ճչգրիտ գծերը: Դրանով պատմագիտութիւնը յաղթահարում է քաոսը, դառնում տրամաբանօրէն ընկալուող համակարգ՝ վերածուելով գիտութեան՝ որպէս հիմք ունենալով պատմականութեան (իստորիզմի) սկզբունքը: Այդ դիտանկիւնով ընկալուող դասերի հաշուառումն է միայն թոյլ տալիս խուսափել անցեալի իդէալականացման կամ արդիականացման միակողմանի ու հաւասարապէս վտանգաւոր չեղումներից:

Պատմականութեան ակնոցներով դննուող դէպքերի ու իրադարձութիւնների իմաստաւորումը՝ մեզ անցեալից բաժանող տարածութեան հաշուառումը, Ռուբինա Փիրումեանի մօտ ձեւաւորուել են պատմաբանի համար խիստ անհրաժեշտ այն ճաշակն ու հոտառութիւնը, ինչը նրան հնարաւորութիւն է տուել չարագրանքը դարձնել համաոստ, մեկնաբանութիւնները պահել չափի մէջ, բարձրանալ իրադարձութիւններին մասնակից գործիչների անձնական ու կուսակցական պատուախնդրու-

(Շար. 11րդ էջ)

Լաւագոյն Դասեր՝ Ներկայի Համար

(Շար. 2րդ էջէն)

Թիւններից, բայց դրա հետ միասին հաշուի առնել նրանց գործունէութեան իրական արդիւնքները: Այս առումով խիստ կարեւոր ու նաեւ ուսուցողական է տուեալ դարաշրջանի իշխող քաղաքական վերնախաւի՝ Հ.Յ.Դաշնակցութեան «անկախութեան սերնդի» քաղաքական դիմանկարը, որը, հեղինակի բնորոշմամբ, կազմում էր «Հայ ժողովրդի կամքն ու ուժը կովկասում»: Ե՛ւ իր քաղաքական փորձառութեամբ, և՛ կրթական մակարդակով գործիչների այդ փաղանգն առանձնայատուկ էր: Ժողովրդավարութեան կարիք ամէնեւին էլ չզգացող երկրում՝ 1918-1920 թուականների սոված ու արնաբամ Հայաստանում քաղաքական ընդդիմութեան եւ անգամ ազգաղաւ բոլշեւիզմի հանդէպ որդեգրուած համեմատաբար մեղմ կեցուածքը բաղդատման նզրեր կենցուածքը (ժողովրդավարութեան յաղթարշաւի դարաշրջանում) մեր պետական այրերին բնորոշ հատուածական, այլախոհութիւնը մերժող մօտեցումների հետ: Ու եթէ Հ.Յ.Դ. «անկախութեան սերնդին» ինչ-որ տեղ կարելի է դատապարտել բոլշեւիկների հանդէպ մեղմ վերաբերմունքի համար (եւ հեղինակը յաճախ ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրում է հենց այդ հանգամանքի վրայ), ապա մեր անկախութեան ներկայ ղեկավարները արժանի են աւելի դաժան դատապարտման՝ ժողովրդավարութեան կարիքը խորապէս զգացող դարաշրջանում այդ կարեւոր գործօնը գիտակցաբար անտեսելու ու մենատիրութեան ձգտելու համար: Իրաւացի է հեղինակի այն պնդումը, որ «Դաշնակցութիւնը եթէ Հայաստանում գործել է իբրեւ պետական կուսակցութիւն, ապա երբեք չի տիրապետել իշխանութեան վրայ եւ իր կապը պետութեան հետ պահել է խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի միջոցով» (էջ 191): Հ.Յ.Դ. Բիւրոն ամրողջովին իր ձեռքն է վերցրել իշխանութիւնը միայն պետութեան հիմքերի դէմ ուղղուած դիմումած ապստամբութեան՝ 1920թ. Մայիսեան խռովութեան ընթացքում:

Ռուբինա Փիրումեանի չարագրանքը սկսւում է 1917թ. Փետրուարեան յեղափոխութեան չրջանից եւ աւարտուում Հայաստանի խորհրդայնացմանը յաջորդած իրադարձութիւնների նկարագրութեամբ ու որպէս վերջարան՝ համաոօտ խորհրդածութիւններով: Այս բարդ ու հակասական ժամանակաշրջանը սկսւում է ռուսական հին կայսրութեան կործանումով եւ աւարտուում նոր կայսրութեան ձեւաւորմամբ: Եւ միջկայսերական այդ կարճատեւ, բայց իրադարձութիւններով յագեցած տարիները՝ 1917-1921 թուականները, ներկայացուում են ազգային ու ապազգային-կայսերական նախասկզբի կրողներ հանդիսացող ուժերի՝ Հ.Յ.Դաշնակցութեան ու բոլշեւիզմի յարաբերութիւնների դիտանկիւնով: Ռուսաստանի ժամանակաւոր կառավարութեան յուսադրող ամիսները, բոլշեւիկեան յեղաշրջումը, ռուսական բանակի նահանջը, ճակատը պահելու տենդագին փորձերը, Անդրկովկասի օրապակաս հանրապետութեան ձեւաւորումն ու քայքայումը եւ ապա քաղդր անկախութեան չրջանը իրադարձութիւնների այն չղթան է, ուր կործանուած կայսրութեան փլատակների վրայ կանգնում է մի փոքրիկ ժողովրդի անկախութեան փխրուն չէնքը: Ու երբ Հայաստանը բաղում չարչարանքներից յետոյ ընթանում էր դէպի ներքին ու արտաքին կայունութիւն, սկսւում է իրադարձութիւնների զարգացման երկրորդ չղթան՝ բոլշեւիկ-քեմալական դաւադրութիւնը հայ ժողովրդի դէմ, Մոսկուայում Հայաստանի պատուիրակութեան ձեռնարկած փորձերը՝ կանխելու դէպքերի ողբերգական զարգացումը, Սեւրը եւ ռուս-թուրքական դաշինքի ամրապնդումը, հայ-թուրքական պատերազմը եւ խորհրդայնացումը: Այս երկու անտեսանելի չղթաների միջեւ հեղինակի կողմից ստեղծուել է որոշակի տրամաբանական կապ, որն իմաստաւորում է Վահան Նաւասարդեանի խօսքերով. «Որեւէ գաղափար թաղելու համար պիտի թաղել բուն գաղափարը եւ ո՛չ թէ այդ գաղափարը կրողին»: Իսկ ինչպէս նշում է Ռ. Փիրումեանը՝ «Հայրենիքի ազատութեան եւ անկախութեան գաղափարը յաւերժական ներկայութիւն է ու չարժիչ ուժը հայ ժողովրդի դեռ չարունակուող պայքարի» (էջ 380): Այսպիսով, չարունակուող պայքարի գաղափարն է հիմնաւորում Հ.Յ.Դ.-բոլշեւիզմ յարաբերութիւնները ներկայացնելու եւ առաջինի հանդէպ 1917-1921 թուականներին բոլշեւիզմի ձեռք բերած յաղթութեան անցողիկ բնոյթը հիմնաւորելու միջոցով: Ազգային նախասկիզբը իր ժամանակաւոր պարտութեամբ դնում է իր ապագա յաղթանակի հիմքերը: Փոքր, բայց ամուր արմատներ ունեցող ուժը ժայռերի մէջ ճգմուած թզենու նման նոր չիւղ է տալիս, յաղթահարում է տձեւ ու անիմաստ ժայռաբեկորների դիմադրութիւնը, վերագտնում է ինքն իրեն ու իր էութիւնը: Անկախութեան յաւերժող գաղափարը հասցուում է մինչեւ տրամաբանական չղթայի նոր հանգոյցը՝ ԽՍՀՄ փլուզումը եւ Հայաստանի վերանկախացումը՝ հիմնաւորելով այն տեսակէտը, որ փոփոխուել են գաղափարախօսութիւնները, իշխանութիւններն ու վարչակարգերը, բայց սկզբունքօրէն չի փոխուել Հայաստանի ո՛չ արտաքին եւ ոչ էլ ներքին կացութիւնը: Իսկ «Հայեռոուս յարաբերութիւնների մէջ չատ հարցեր նոյնն են մնացել թէ՛ իրենց բովանդակութեամբ եւ թէ կարեւորութեամբ» (388): Սրանով հեղինակը յուշում է ընթերցողին անցեալից դասեր քաղելու, յաջողութիւններն ու նուաճումներն ամրապնդելու եւ մեր ձախողումներն ու սխալները անցեալի միջոցով հասկանալու ու վերացնելու անհրաժեշտութիւնը: Կարծես՝ Հայոց անկախութեան երկու սերունդները հանդիպում են միմեանց Ռ. Փիրումեանի աշխատութեան մէջ՝ գիտականութեան ու քաղաքականութեան սկզբունքների համադրութեան եզրագծին, եւ առաջինը երկրորդին է փոխանցում պատմութեան էստաֆետը:

Շարադրանքի ամրողջականութեամբ ու ներքին տրամաբանական կապով նախորդ ուսումնասիրութիւններից տարբերուող այս աշխատութիւնը զերծ չէ նաեւ առանձին թերութիւններից: Մեր կարծիքով, հեղինակը խօսելով Հ.Յ.Դ.-բոլշեւիզմ գաղափարական խոր տարաձայնութիւնների մասին՝ այնուամենայնիւ չարագրանքի վերջնամասում պէտք է մի փոքր աւելի տեղ յատկացներ գաղափարների երկարատեւ պայքարում առաջինի ձեռք բերած յաղթանակի եւ բոլշեւիզմի պարտութեան պատճառների վերլուծութեանը: Յանկալի է նաեւ ուշադրութիւն դարձնել գրքում օգտագործուող հասկացութիւնների ձեւակերպման, ռուսերէն տերմինների հայացման եւ ճիշդ թարգմանութեան վրայ: Պէտք է խուսափել, այսպէս կոչուած, «խաոր» հասկացութիւններից, օրինակ՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդը (ռուսերէն՝ Սովետ Նարոդնիխ Կոմիսարով) աշխատութեան 37րդ էջում վերածուել է Սովետների Գերագոյն Կոմիսարների Խորհուրդ անկապ հասկացութեան, Մալկա տեղանունը (էջ 10) «հայացուել» ու դարձել է Մալքա, Հրանդ Գալիկեանը՝ Հրանդ Գալիքեան (էջ 25) եւ այլն:

Սակայն այս թերութիւններն ու անճշդութիւնները չեն նսեմացնում Ռուբինա Փիրումեանի բարեխիղճ, ամրողջական ուսումնասիրութեան արժէքը, որը լաւագոյն դաս է մեր անկախութեան ներկայ սերնդի համար: